



# ԱՐԿԱԴԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ. «Եթե գրողը ստեղծագործելիս երկունքի ցավեր չի ունենում, եթե փառապանքից չի ծնվում երկը, ապա այն արժեքավոր չի կարող լինել»



ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 1

## րի գրող եք Ձեզ համարում:

– Ինչպես արդեն նշեցի, շատ վաղ տարիքից եմ սկսել ստեղծագործել, բայց դեռ իմ ասելիքը չեմ վերջացրել: Դեռ բազում անտիպ գործեր ունեմ: Ես ինձ համարում եմ արձակագիր: Ճիշտ է, ստեղծագործում եմ նաև չափածո, բայց ինձ բանաստեղծ չեմ համարում: Թեպետ «Հողի սիրով» բանաստեղծությունների ժողովածուս առանձնահատուկ տեղ է գրավում իմ գրական արվեստում: Այնտեղ որոշեցի անդրադառնալ տարվա եղանակներից ամռանը, քանի որ մինչ այդ մեր գրականության մեջ հիմնականում ներկայացվել են գարունը, աշունն ու ձմեռը: «Թուրուսի խութի գրավումը» վիպակս եմ կարելուում, որը շատ ուշագրավ ստեղծագործություն է՝ փաստավերագրական հիմքով եւ, իհարկե, գեղարվեստական նկարագրություններով ու ընդհանրացումներով: Գրել եմ պատմվածքներ, որոնք հիմնականում ավելի շատ կարելի է նույնիսկ համարել, քանի որ ունեն անսպասելի վերջաբան:

## – Ձեր ստեղծագործությունները ո՞րն էք համարում գլուխգործոց, եթե կարելի է այդպես անվանել:

– Դա նույնն է, որ ծնողին հարցնեք, թե զավակներից ով է ամենասիրելին: Այնուամենայնիվ, փորձեմ պատասխանել. «Ծուխ ծխանի» գիրքս իմ ստեղծագործության գլուխգործոցն է: Այն կազմված է երեք մասից՝ «Օջախ», այսինքն՝ հայ ժողովրդի արմատները որտեղից են գալիս, ինչպես ենք ներկայացել աշխարհին, 2-րդ մասում ներկայացվել են 1937թ. խորհրդային ժամանակաշրջանի կամայականություններն ու անիրավությունները, 3-րդ մասում՝ ընդհանուր պատմվածքներ բռնադատվածների ընտանիքների, ինչպես նաև Դարաբաղյան ազատամարտի մասին: Գիրքը լույս է

տեսել 2007թ., եւ ես այն գլուխգործոց եմ համարում, քանի որ ընդգրկված թեմաներն ինձ ավելի հարազատ ու սրտամոտ են:

## – Ձեր ամբողջ կյանքը նվիրաբերել եք ստեղծագործելուն, եւ դա Ձեր էությունն է: Որտեղից էր գալիս Ձեր ոգեշնչման աղբյուրը:

– Իմ պապը շատ գրքասեր մարդ էր եւ գիրքը համարում էր սրբություն: Մի անգամ ասաց. «Ա՛ խոխա, քարատակում գիրք եմ կյաղալ»: Սրանք այն ժամանակներն էին, երբ շատ գրողների ստեղծագործություններ արգելված էին: Գնացի եւ քարատակից հանեցի թղթով փաթեթված կապոցը, որտեղ պահված էր Ակսել Բակունցի «Մթնածոր» ժողովածուն, եւ սկսեցի գիշեր-ցերեկ ընթերցել. պատմվածքներ կային, որ նույնիսկ անգիր գիտեի: Փաստորեն, գրական առաջին ուսուցիչս եղել է Ակսել Բակունցը, այնուհետեւ՝ Եղիշե Չարենցը, որի բանաստեղծությունները սիրում էի արտասանել: Չեռագայում իմ գրական գործունեության վրա զգալի ազդեցություն թողեց մեր հայրենակից, արձակագիր Սուրեն Այվազյանը, ում հետ մտերիմ էի: Վերջինս ասում էր, որ գրականությունը սրբություն է եւ այդ սրբությունը ներարկում էր նաև իմ մեջ. արդյունքում ես ինքնամոռաց տրվեցի գրականությանը: Կարող եմ ասել, որ հոգեւոր իմաստով իմ ուսուցիչը եղել է Ակսել Բակունցը, գործնական իմաստով՝ Սուրեն Այվազյանը: Մեծ ազդեցություն եմ կրել նաև մեր նշանավոր արձակագիր Սերո Խանգոյանից, ով ասում էր՝ ժողովրդից մեծն ու խելացին չկա, ով հեռացավ ժողովրդից, նա այլևս գրող չէ: Սերո Խանգոյանի ազդեցությամբ հետագայում սկսեցի զբաղվել բանահավաքությամբ եւ տպագրեցի «Ձանգեզուրյան տաղեր» ժողովածուն, որն իմ երկար տարիների

աշխատանքի արդյունքն է:

## – Կես դար ստեղծագործել եք, բայց Ձեր ստեղծագործության վերաբերյալ երբեւիցե գրականագիտական, գրաքննադատական խոսք չի ասվել:

– Դրանում մեղավոր եմ միայն ես, քանի որ չեմ պահանջել կամ առաջարկել, որ իմ ստեղծագործության մասին գրեն՝ մտածելով, որ գիրքս կարդալուց հետո կգրեն: Եվ հիմա՝ տարիների հեռավորությունից, կարող եմ ասել, որ այդ հարցում պասիվության համար թանկ եմ վճարում: Իմիջիայլուց, նման մտտեցում ուներ նաև Սուրեն Այվազյանը, ով մշտապես ասում էր, որ իրեն գնահատողը հասարակ ժողովուրդը պիտի լինի:

## – Հաշվի առնելով, որ Դուք Սուրեն Այվազյանի մտերիմ ընկերներից եք եղել՝ մեզ հետաքրքրում է մի հարց. ինչո՞ւ նրան հուղարկվորեցին Խնձորեսկի իր տան բակում՝ հակառակ ավանդակարգի:

– Դա երեւի կապված էր նրա հետեւյալ արտահայտության հետ. «Թեկուզ մեռնեմ, ինձ կթաղեք Ձանգեզուրում», բայց նա երբեք չի ասել՝ ինձ կթաղեք մեր բակում:

## – Ի՞նչ է Խնձորեսկը Ձեզ համար:

– Խնձորեսկն իմ ծննդավայրն է. ես սկսել եմ այստեղից, այստեղ էլ պիտի ավարտվեմ: Իմ հայրենասիրությունը սկիզբ է առնում Խնձորեսկից:

– Կարծում եմ՝ այսօրվա անարժեք գրքերի լույսընծայման համար մեղավոր է նաև Հայաստանի գրողների միությունը, քանի որ խոստան գրքերը տպագրվելուց հետո գրականագիտական, գրաքննադատական խոսք չի հնչում, որով կա՛ն կոդաբեզվի այդպիսի գրքերի հրատարակումը, կա՛մ էլ ընդհակառակը՝ կարծեւորվեն դրանք, եթե արժանի լինեն:

– Ցավալի է, բայց դա բացարձակ ճշմարտություն է. այդ խոստանը, որ լույս է տեսնում, շատ հաճախ փողային հարաբերություններով է պայմանավորված: Այսինքն՝ որակին այսօր ոչ մի մակարդակում ուշադրություն չեն դարձնում՝ ոչ պետությունը, ոչ էլ Հայաստանի գրողների միությունը: Շատ հաճախ կարծում են, թե գրականությունը սկսվում եւ ավարտվում է մայրաքաղաքում, իսկ մարզերում ստեղծագործողներին բացարձակապես ուշադրություն չեն դարձնում՝ մոռանալով, որ իսկական հանճարները ծնվել են հեռավոր գյուղերում: Այսօր ինձ՝ որպես ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահի, նախեառաջ հետաքրքրում է ստեղծագործող անհատը՝ անկախ մակարդակից, հրատարակած գրքի գեղարվեստական արժեքից: Առաջին հայացքից դա կարող է տարօրինակ թվալ, բայց իմ կարծիքն իր հիմքերն ունի. Սյունիքում, որ ժամանակին ծնունդ է տվել բազում նշանավոր արվեստագետների, այսօր գրեթե ստեղծագործող չունենք:

## – Ըստ Ձեզ՝ ո՞րն է այսօրվա գրականության խնդիրը:

– Իմ կարծիքով՝ գրականությունը գիտություն է մարդու համար, այն պիտի հասանելի լինի նախեառաջ հասարակ մարդկանց: Այսօր լույս են տեսնում հայհոյախառն ստեղծագործություններ, որոնք անհնար է բարձրաձայն կարդալ: Ձեռնախեղում եւ ձեռնափոխում են իսկական արվեստը՝ մոռանալով, որ արվեստը ժողովրդի համար է ստեղծվում, այն պիտի արտացոլի ժողովրդի հոգեբանությունը: Գրականությունը մարդու մասին գիտություն է, որ այսօր հեռացել է մարդուց, մարդը դուրս է մղվել գրականությունից:

## – Ուրեմն՝ որո՞նք են գրականությանը ներկայացվող ամենաառաջնային պահանջները:

– Իմ կարծիքով՝ գրականությունը գաղափարախոսություն է, բայց ես ի նկատի չունեմ այն, որ նախօրոք մտածես, հետո գրես, այսինքն՝ պիտի կյանքը հասկանաս, կենսափորձ ունենաս, որ գրես, պիտի երեւոյթի խորքը ներթափանցես, ինչպես օրինակ մեր հանճարեղ Համո Սահյանն է արել: Նա բնության հետ խոսում է, անձնավորում այն, ըստ պատշաճի ներկայացնում բոլոր գույները: Ես կարող եմ համարձակորեն ասել, որ այսօր մեր գրականության մեջ Համո Սահյանին փոխարինող չունենք: Նա ժողովրդին հասկանալի լեզվով է գրել, ամենածույլ աշակերտն անգամ հասկանում է Համո Սահյան: Փիլիսոփայելով կյանքի մասին՝ բնությունը մոտեցրել է մարդուն բանաստեղծելով, բանաստեղծելով է փիլիսոփայել: Հիմա մեր նորերուկ գրողներն ուզում են փիլիսոփայել բանաստեղծելով: Առհասարակ եթե խոսքը չափածոյից է վերաբերում, ապա այն ունի իր չափանիշները, ինչպես բնության մեջ գետն առանց կարկաչելու չի կարող լինել, այնպես էլ բանաստեղծությունն առանց այդ չափանիշների չի կարող արժեքավոր լինել: Այսօր բանաստեղծություն են գրում առանց կարկաչելու, խոխոջելու (փիլիսոփայական մի արտուրդ մոտեցում), որ ներկայացվում է ընթերցողին: Գրականության դերը ստեղծագործաբար փիլիսոփայելն է, ճիշտ է, գրականությունը փիլիսոփայություն է, բայց փիլիսոփայությունը գրականություն չէ: Կան ստեղծագործություններ, որոնք ընթերցելիս նույնիսկ ես չեմ հասկանում: Ինչ վերաբերում է գրականագիտությանը, կարող եմ ասել, որ մենք հրաշալի գրականագետներ ունենք, բայց գրականագիտական դպրոցը մեզանում, կարելի է ասել, չի գործում:

– Այսօր, կարծեք, մեր երկրում մտավորականությունն իրեն զգալ չի տալիս, հասարակական-քաղաքական հրատապ հարցերին իր մասնակցությունը չի բերում: Իհարկե, շատ լուրջ մտավորականներ ունենք, բայց որպես այդպիսի հասարակական խավ՝ չունենք:

– Ստալինյան ժամանակներում այլախոհներին արտուրել են Սիբիր, որ ավելի նախընտրելի էր, քան մեր այսօրվա իրականությունը, երբ ընդդիմախոսներին համարում են «գիբիլ»: Ափսոսանքով պիտի նշեմ, որ մտավորականության հանդեպ ներքին բռնաճակատ արհամարհանք կա, մասնավորապես երբ մտավորականն իշխանաճնորհանձնում է: ԷՋ 8

### Նախնյաց նշխարների դասադասում

#### ՇՆՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ

■ Բանասիրական գիտությունների դոկտոր, «Համա Սահյան ԳՍԿ»-ի նախագահ



Մի քանի տարի առաջ այնքան էի հրապուրվել խնձորենի պատմաաշխարհագրական, ազգագրական, բանահյուսական ֆենոմենով, որ սկսեցի ուրվագծել այդ ոչ սովորական բնակավայրի պատմությունը: Բայց պարզվեց, որ ինձ հետաքրքրող հարցերի պատասխանն Արկաղի Ծատուրյանն արդեն տվել է իր գրքերում: Ես գտա խնձորենից երկու աշուղի գրքեր՝ «Էդգարի քնարը» (աշուղ Ռեսուր-Օղլի-Սարգիս, 1984) և «Նոր երգարան» (աշուղ Թառնյունի-Ներսես Սազանդարյան, 1898թ.): Իր գրքերում նրանց մասին գրում է Արկաղի Ծատուրյանը՝ սիրով և հպարտությամբ:

Արկաղին շատ հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում Հին, Նոր և Ներքին խնձորենիցների միջև: Անշուշտ, Նոր խնձորենից պիտի կայանար, բայց Հինն էլ չպետք է մոռացվեր, որովհետև այն միայն պատմությունն է, այլ նաև պայքար, հաղթանակ, բնավորություն, մարդկային որակ և այլն: Այդ գյուղն ուներ 18 թաղամաս՝ ինքնատիպ անվանումներով (Ակնի մահլա, Ծոմահլա, Խաշխաշի ձոր, Յերի թաղ և այլն), 27 աղբյուր (Ակնի, Ծլլուկի, Կուվկվանց, Խլափուկ և այլն), 17 քրաղագ, 5 ձիթան-սրանոց, 5 բրուտանոց, 148 հանդամաս՝ երեց անուններով: Գյուղն ուներ բազում արհեստավորներ և 20 աշուղ, տասնյակ սազանդարներ: Արկաղի Ծատուրյանը ջանում է, որ այդ սերը մնա սերունդների հիշողությունում:

Բազմաբեղուն ստեղծագործող է Արկաղի Ծատուրյանը: Դրա ապացույցներից մեկն էլ 2013թ. լույս տեսած «Հույսի ճանապարհ» ժողովածուն է: Այն բաղկացած է ինը ենթաբաժնից («Հույսի ճանապարհ», «Հայրենական», «Խրատանի», «Միրո արահետ», «Քառյակներ, տաղիկներ», «Առականի», «Մանրաքանդակներ», «Իմաստախոսություններ», «Պատմվածքներ և նովելներ», ինչպես նաև դրամա՝ «Մի կրակեք հայերի վրա») խորագրով: Ընթերցելու հսկայական նյութ կա այդ գրքում՝ տարբեր տարիքի և հետաքրքրություններ

րի տեր մարդկանց, ինչպես նաև խորհելու թեմաներ՝ մեզ՝ գրականագետներին համար: Ես ծանոթ էի նաև դեռևս 2001թ. լույս տեսած նրա «Հողի սիրով» ժողովածուին: Այն ընդգրկում է մարդու, բնության երկրունք, պեղող բազմաթիվ բանաստեղծություններ, նաև բնության հետ միախառնվելու, նրանից սովորելու մոտիվներ՝ «Ծանրությունը փոխ առ քարից, բարձրությունը փոխ առ սարից, ջերմությունը փոխ առ շողից, բերրությունը փոխ առ հողից, խորությունը փոխ առ ծորից» բանածեերով: Այնտեղ կա նաև իր արած-դրածի մի երկյուղած գնահատական:

**Բան է, թե ես չիմեմ,  
Իմ բալիկը հո կլինի,  
Տարիների հեռվում շենշող  
Իմ գալիքը հո կլինի:  
Սակայն տեսնես ինձնից հետո  
Իմ կարիքը դեռ կլինի:**

Անշուշտ, Արկաղի Ծատուրյանի բանաստեղծական աշխարհը դեռ մեկնաբանությունների կարիք ունի, որը պիտի թողնենք ապագային, սակայն նրա վաստակն արդեն, իր բառերով ասած, ծանրություն ունի և սարի բարձրություն: Ծանաչողական հսկայական նշանակություն ունի «Մենախոսություն Սյունիքի և սյունեցու մասին» գիրքը, որն ազգագրական, բանահյուսական պատկանելի նյութ է պարունակում: Նրանով կարելի է վերծանել ու մոռացությունից փրկել շինականի ապրելու և արարելու հատկություններն ու մանրամասները:

Չափազանց դրվատելի է այն հանգամանքը, որ Արկաղի Ծատուրյանն ամեն գրքում հունորի մի շերտ է տեղավորում, նաև մի ամբողջ ժողովածու՝ «Ծիծաղում է խնձորենիցը» վերնագրով: Այն գյուղական երգիծանքի մի ամբողջ շտեմարան է: Այնտեղ ես գտա նաև մորս քեռորդուն՝ Դնելանց Վանոյին, ում հետ բազում շփումներ են եղել: Հունորի մեծ զգացողություն ունենալուց բացի, նա մնում է խնձորենի իրադարձությունների մեկնիչ, խնձորենիցու հավաքական կերպար՝ իր հոր՝ այգեպան Արսենի մոտ:

Արկաղի Ծատուրյանը հիանալի գիրք է գրել նաև Ներքին խնձորենի մասին: Խորհրդային տարիներին, երբ լեռնային շատ բնակավայրեր Հայաստանի քարտեզից վերանում էին, խնձորենիցները 1983թ. խիզախեցին հիմնելու մի նոր գյուղ, ըստ որում՝ սահմանազխին: Արկաղի Ծատուրյանը դարձավ Նոր գյուղի դպրոցի հիմնադիրը: Հետագայում, երբ գյուղն ինքնահաստատման ճանապարհին էր, սկսվեց Նորաքաղյան հակամարտությունը, և մարդիկ հայտնվեցին կրակի առաջին գծում, գոհեր եղան, սակայն ի վերջո հաղթեցին խնձորենիցները, Ներքին խնձորենիցը հարատևեց:

...Արդեն մի քանի տարի է, որ Արկաղի Ծատուրյանը ղեկավարում է Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղը: Այդ ընթացքում չի դադարել ստեղծագործել, կազմում և խմբագրում է գրքեր, օգնում էրիտասարդներին, կազմակերպում բազմապիսի միջոցառումներ: Այդ ամենն անում է անաղմուկ, սրտի կանչով ու հաճությամբ: Ձավակներով, թոռներով և ծոռներով շրջապատված՝ նա այսօր պիտի վայելի իր վաստակի պտուղները: ■

### Կյանքում միշտ սխառնի համար

#### ՈՒՐԵՐԸ ԷԶՆԱՆՆՅՈՒ

■ Լեռնաձոր համայնքի պատվավոր անդամ



Ճգնակեցությանը դույզն-ինչ հակվելով՝ խորհում են, որ մանկավարժական աշխատանքի նախասիրությունը մատենագրությանը նվիրվելու բաղձալի խոստում է: Նայեցեք Սյունիքի և համայն հայոց դարերն ի վար՝ պատմիչները, գրիչները, ծաղկողները, քերթողներն անխտիր վարժապետել

են: Մեր մաշտոցյան վայրեր երկրամասում Մովսես Խորենացուց (թե՛ Խորենացի) մինչև Մերո բուրդ երեւելիները մատենագրել են դաս-ուսուցումին զուգընթաց կամ հետո... Այս բանածեւումը հույժ տեսանելի է մերօրյա բազմավաստակ այդ Արկաղի Ծատուրյանի օրինակով: Շառավիղված լինելով բիբլիոթեկային ժամանակների Չազ Հաբանդեցու ուսուցանող խնձորենից նորակա գերդաստանից՝ գորիսյան մեծերի մրցասպարեզում իր երկու տասնյակ հատրյակով դափնեպսակ առավ ու տեղ գրավեց Լաստի խութ պառնասի լուսաշող բարձունքում...

Կարդացե՛ք, կարդացե՛ք Արկաղի Ծատուրյանի՝ որդի երվանդի. պատմաբան է, բանաստեղծ ու արձակագիր, բանահավաք ու ազգագրագետ է, նոր ժամանակի քաղաքական անցուդարձերի մտահոգ դիտորդ ու գիտակ է, նաև՝ քահ-քահ ծիծաղող ու հեգնող սյունեցու խնձորենիցաբայր տարեգիրն է:

Ընկեր Ծատուրյան (կուզե՛ք՝ նաև պարոն Ծատուրյան), Քո կրտսեր համատեսակն են. արդ, գիտեն, որ շողափայլ պարզեւներին անտարբեր են եւ, ընթերցողների բազումը կազմակերպելով, պարզեւատրում են Քեզ Կապանա իմ օրրանի մշտագո ընծաներով՝ Անդոկ ճահպատի դարասրող խոսք ու պատգամի ոգեղենությամբ, Աժդանական-Կապուտուղի սլացքի անզուգական վեհության բնապատկերով... ■

Քո գրչին անխամիր գորություն են մաղթում: Հնագույն մանկավարժ Քո հեղինակած գրադարանով վերստին ապացուցեցիր, որ կյանքում միշտ տեղ կա սխառնքի համար: ■

### Գրին ու գրականությանը մվիրաբերած կյանք

#### ՏԻՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Ըստ իս՝ մարդ մնալու տաղանդով օժտված լինելն է գրող դառնալու առաջին և ամենազվապակող նախապայմանը: Ասել է թե՛ մարդկային խիղճը, արդարամտությունը, ազնվությունն ու անկաշառությունը հոգում կրելու ուժն է աստվածատուր շնորհի ունեցող անհատը միայն կարող է իրեն իրավունք վերապահել գրող լինելու հավանությանը գրիչ վերցնել ու կյանք կոչված «վերծանելուն» միտված իր ընկալումների վրա խարսխված ասելիքն իրեն մատչելի գրական ձեւերի մեջ փորձել ներկայացնել հանրությանը:

Եթե հնչած տեսակետը մի քիչ գրականագիտական կտրվածքով վերաշարադրվի, ապա պարզապես պիտի ասվի՝ մարդկայինը գեղագիտական իդեալ դարձած են դրանով ապրող հասարակության լուսավոր անհատը միայն իրավունք ունի գրողի կոչմանը ձեռք մեկնել:

Արկաղի Ծատուրյանի համար բնությունն են գլխից մարդ կոչված բարձունքի վրա ապրելու առաքելությունն էր վերապահել՝ պարզեւելով նրան կենսահաստատ ու կորովի ոգի:

Անկեղծ ասած՝ ինձ միշտ նրա ստեղծագործական անսպառեռանդն ապշեցրել է: Կարելի է անվերապահորեն ասել, որ նա հիացմունքի արժանի մոլեռանդությամբ իր կյանքն ամբողջովին մվիրաբերել է գրին ու գրականությանը:

Գրական համարյա բոլոր ժանրերի մեջ ստեղծագործելով՝ Արկաղի Ծատուրյանն ավելի քան քսան գիրք է հեղինակել: Բազմաբնույթ այդ գրքերի շուրջ խորհրդածություններ ծավալելու անհրաժեշտությունն այս փոքրածավալ խոսքի մեջ չտեսնելով՝ նրա գեղարվեստական արձակին վերաբերող որոշ նկատառումներ, այնուամենայնիվ, պարտավորված են զգում ներկայացնել:

Գրողի «մասնագիտության» վերաբերյալ Բեռնարդ Շոուն մի պարզ, բայց անչափ տարողունակ ձեւակերպում ունի. «Գրողն ինքն իր հետ զրույց է անում, աշխարհն ականջ է դնում»: Ասույթի խորիմաստությունը հնչող այս նկատառումը, անշուշտ, ենթադրում է, որ գրողը կյանքի ճշմարտությանը հավատարիմ, անաչառ ու անկեղծ լեզվով պիտի ինքն իր հետ զրույց անի՝ ամենեւին «չկառավարվելով» այն մտայնությամբ, թե իրեն ինչպես են ականջ դնելու:

Ցավոք, երբեմն Արկաղի Ծատուրյանը գեղարվեստական թեման ներկայացնելիս չի անկեղ-

ծանում այնքան, որքան գրողը պարտավոր է: Նման պահերին, իրականության ճշմարտության փոխարեն, թեմայի հիմքում ընկած գաղափարն է նրա գրչին առաջնորդում՝ հեղինակային այն անթաքայց մտահոգությամբ, թե ինչպես են իրեն ականջ դնելու:

Հրապարակախոսական ժանրի մեջ նման մտահոգությունը միանշանակ ցանկալի, շատ դեպքերում անգամ պարտադիր է: Բայց եթե գեղարվեստական երկն արարելու ընթացքում նրանում դրված գաղափարը հեղինակային նպատակամիտվածությամբ միջամտում է ստեղծագործական գործընթացին, ապա որքան էլ հեղինակը ջանա լեզվական հնարքներով տվյալ պատումին հավաստիության երանգ ու պատկառազուր հնչեղություն հարողը՝ մեկ է, իսկական ընթերցողը նրա ասելիքի պահանջվածությամբ լուրջ չի վերաբերվելու:

Պիտի արձանագրեն նաև, որ Արկաղի Ծատուրյանի որոշ ստեղծագործություններում բավականին ակնառու ձգձգվածություններ կան: Եվ այստեղ, ինչպես ինձ, այնպես էլ յուրաքանչյուր ստեղծագործող մարդու ուզում են հիշեցնել՝ գեղարվեստական ստեղծագործությունը գրելու պահին շարադրանքի մեջ հենց սրտիդ մասնակցությունը սկսում է բացակայել, գրիչը վայր պիտի դնես: Արկաղի Ծատուրյանի ստեղծագործությունների մեջ տեղ գտած որոշակի ձգձգվածություններ հենց գրիչը ժամանակին վայր չդնելու, գաղափարական խոհն ապրումի տեղ ներկայացնելու հետևանք են:

Հնչած նկատառումների լույսի ներքո պիտի փաստեն, որ նրա արձակ այն գործերում, որոնցում նկատելի չէ, որ գեղարվեստական թեմայի ընտրության հարցում որեւէ գաղափարախոսական միտում դերակատարություն է ունեցել, և որոնցում նրան հաջողվել է ձեռքբազատվել այդ պատումների գաղափարներն առաջին պլան մղելու, ընթերցողին հռետորական ոգեշնչվածությամբ «լուսավորելու» կամ «դաստիարակելու» գայթակղությունից՝ այդ ստեղծագործությունները գրական իմաստով կայացել և իրենցից գեղարվեստական իսկական արժեքներ են ներկայացնում:

Անհրաժեշտ են համարում նշել նաև, որ իրենց գրական ուրույն փայլով Արկաղի Ծատուրյանի արձակ խոսքի համապատկերի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում գեղարվեստական շնչով տոգորված հրապարակախոսական հոդվածներն ու ելույթները, որոնցում առկա են հռետորական խոսքի պատկերավոր կառուցիկության բոլոր նրբերանգները: Պիտի խոստովանել, որ գրական այս ասպարեզում նա երբեմն պարզապես անմրցելի է...

Ավարտելով խոսքս՝ երեւի թե պարտավոր են Արկաղի Ծատուրյանի մարդկային տեսակն ընթերցողին առավել ընկալելի դարձնելու համար նաև արձանագրել, որ Արկաղի Ծատուրյան ուսուցիչն ու մանկավարժը, ապրելով գյուղական իրականության մեջ, կարողացել է ոչ միայն ողջ կյանքում իր խոստաբար միջավայրի ակնածալի պատկառանքը վայելող ետալուն ու զարդը լինել, այլև կարողացել է հասարակ ժողովրդի հուզաշխարհով ապրելու բարոյական խիզախման առաքինությունը դավանանք դարձրած՝ իր ժամանակի անզուգական Մարդը լինել... ■

Ինքնակենսագրական ակնարկ

# Իմ փարիները

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

աշխատելու կաթի հաշվառիչ: Ութ հարյուրից ավելի կթու կով ունեցող ֆերմա էր: Կաթը չափում-կշռում էի յուրաքանչյուրի համար առանձին, գրանցումներ անում, կաթի յուղայնությունը հատուկ գործիքի (ցենտրիֆուգ) միջոցով որոշում եւ յուրաքանչյուր տասնորյակը մեկ տվյալները հանձնում հաշվապահություն:

Բայց բարձրագույն կրթություն ստանալն ինձ համար շարունակում էր մնալ գլխավոր նպատակ, մինչդեռ լրացել էր տասնութ, եւ բանակ պիտի մեկնեի: Երեք տարի ժամկետով զորակոչվեցի Ուկրաինայի Չեռնիվոլ քաղաքին մոտիկ մի գործարանում ծառայելու: Գործն տանկ էր ու հրացան:

Չորամասը գրադարան ուներ: Այստեղ մի երկու ժամ, կիրակի օրերին, նստում-կարդում էի: Մի օր սեղանին դրված թերթերի մեջ նկատեցի «Ավանգարդ» հայերեն թերթը: Երրորդ էջում ներկայացվել էին երիտասարդ բանաստեղծների ոտանավորներ: Մի գինվորի ոտանավոր էլ կար: Որոշեցի թղթակցել: Հուշատետր ունեի: Նրա մեջ մի քանի ոտանավոր ունեի: Դրանցից մեկը՝ առավել հայրենասիրական, առանձնացրի, գեղեցիկ արտագրեցի եւ «Ավանգարդ» թերթի հասցեով ուղարկեցի Երեւան: Հույս չունեի, թե կտպագրվի: Բայց, ի զարմանս ինձ, տպագրվեց: Դրանից հետո, հրամանատարից մինչեւ շարքային, ինձ «պոետ» էին անվանում:

Ծառայությունս ավարտեցի 1958-ի ամռանը: Վերադարձա գյուղ եւ գործի անցա որպես ակունքի վարիչ: Միաժամանակ դարձա սկզբնական կոմերիտական կազմակերպության քարտուղար: Շուրջս հավաքեցի թատերական եւ համերգային խմբեր: Ինքնագործունեությունն աշխուժացավ: Համերգային խումբը ղեկավարում էր աշխարհագրության ուսուցիչ, քամանչահար Կոյա Յակոբյանը: Թատերախմբի ղեկավարն ու ռեժիսորը ես էի: Փոքրիկ պիեսներ էինք բեմադրում: Այն ժամանակ տարածված էին փոքրածավալ կենցաղային, ծիծաղաշարժ, ագիտացիոն բնույթի մեկ գործողությամբ պիեսիկների բեմադրությունները, որոնք կոչվում էին ինտերմեդիաներ: Մեր համերգային եւ թատերական խմբերը ճանաչվեցին շրջանում:

1959թ. գնացի մայրաքաղաք, գործերս հանձնեցի համալսարանի բանասիրական: Հայոց լեզվից գրավոր եւ գրականության բանավոր քննություններս հաջող հանձնեցի, ռուսաց լեզվի գրավորից կտրվեցի: Մեջս շատ բան կտորվեց: Այնուամենայնիվ սովորելու բուռն ցանկությունս պարպելու համար ընդունվեցի ակունք-գրադարանային տեխնիկում: Ինձ հաջողվեց նաեւ նույն տարում ընդունվել համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժնի:

Տեխնիկումը գիտելիքներ էր տալիս միջնակարգ դպրոցի ծրագրի սահմաններում, բացի մի երկու առարկայից: Անցնում էինք դերասանական արվեստ եւ ռեժիսուրա առարկաներ, որոնք ինձ շատ էին դուր գալիս: Այդ երկու առարկան էլ պարապում էր Հայաստանում քիչ հայտնի դերասան, բայց լավ ռեժիսոր Վրույր Մանվելյանը: Նա նաեւ Երեւանի ուսուցչի տան՝ իր կողմից ստեղծված թատերախմբի գեղարվեստական ղեկավար-ռեժիսորն էր: Մի օր մեզ՝ երեք երիտասարդիս առանձնացրեց ու տարավ ընդգրկեց ուսուցչի տան թատերախմբում: Խուճը մայրաքաղաքում բավական հայտնի էր: Այստեղ էին ընդգրկված նաեւ հետագայում անուն հանած դերասաններ Թաթուլ Դիլաքյանը, Կիմ Երիցյանը, Մայիս Կարապետյանը, «Պատանի հանդիսատես»-ի հայտնի դերասանուհի Վալյա Վարդանյանը եւ այլք: Մանվելյանն ինձ համարում էր ապագա խոստացող դերասան:

1960թ. հանրապետության մշակույթի նախարարության կողմից ստեղծվել էր այսպես կոչված «Ազիտ-բրիգադ»: Այն ուներ բավական պատկառելի կազմ: Այն

տեղ ընդգրկված էին միջազգայնագետներ, գիտնականներ, գյուղատնտեսության մասնագետներ, արվեստի եւ գրականության գործիչներ, երգիչ-երաժիշտներ: «Ուսուցչի տան» թատերախումբը նույնպես ընդգրկվեց այդ կազմում: Եվ եղանք Հայաստանի համարյա բոլոր գյուղերում ու քաղաքներում՝ հանդես գալով հետաքրքիր ներկայացումներով:

1961-ի ամռանն ուրիշ բան որոշեցինք: Նախաձեռնողն էջմիածինցի Ռուբեն էր: Վեղիցի Համոյին համոզել էր, որ գնան «խոպան»: Ես էլ միացա նրանց: Այդ ժամանակներում առասպելներ էին պատմում «խոպանի» մասին: Փողի համը մենք էլ էինք ուզում զգալ: Բայց այնքան փողը չէր, որքան մեր ռոմանտիկ պատկերացումները: Կոմերիտական ուղեգիր վերցրինք ու հայտնվեցինք Ղազախստանի Կուստանայ քաղաքում: Ամբողջ ամառն այս քաղաքում ասֆալտ էինք անում: Ամառվա վերջին վերադարձանք Հայաստան:

Մայրս գրկեց ինձ ու լաց եղավ: Նա սեղանին դրված իմ գրքի միջից հանեց մի թուղթ եւ տխուր մեկնեց ինձ: Կարդացի: Այնտեղ գրված էր, որ ես հեռացվում եմ

համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժնի երկրորդ կուրսից՝ երկար ժամանակ դասերին չներկայանալու եւ քննությունները չհանձնելու պատճառով: Հաջորդ տարին քննություններ հանձնեցի Երեւանի մանկավարժական ինստիտուտի բանասիրականի հեռակա բաժնում եւ ընդունվեցի:

Շարունակում էի ստեղծագործել: Վաղ տարիքից էի տառապում այդ «հիվանդությամբ»: Ստեղծագործելն ինձ համար ամեն ինչից վեր էր: Դա մի այնպիսի ներշնչանք-իրճվանք էր ինձ համար, որ թվում էր, թե առանց դրա աշխարհում ապրել չեմ կարող:

1953 թվականն էր: Սովորում էի 9-րդ դասարանում: Այդ տարի անց էր կացվում ժողովրդական ստեղծագործությունների շրջանային ստուգատես-օլիմպիադա: Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչիս հորդորով մասնակցեցի օլիմպիադային: Հանդես եկա իմ գրած «Համառոտ պատմություն» մի երկարաշունչ բանաստեղծությամբ: Արխիվում այն պահպանվել է: Ասումըրողի երանգավորումներով կարդացի այն ու արժանացա հանդիսատեսի բուռն ծափահարություններին՝ գորիսեցի ավագ եւ կրտսեր տասնյակ ստեղծագործողների մեջ արժանանալով առաջին կարգի մրցանակի: Ուսուցիչս՝ Սմբատ Հայրապետյանը, ինձնից ավելի շատ էր ուրախացել:

Մի ընդհանուր տետր ունեի՝ խառը-մա-

ռը ստեղծագործություններով: 1962-ին էր, թե 63-ին, համարձակվեցի ներկայացնել գրողների միության երիտասարդական բաժին, որը ղեկավարում էր գրող Ստեփան Ալաջաջյանը: Տետրը տվեցի նրան: Նա, դժկամությունը հոնքերի տակ թաքցրած, վերցրեց տետրը, նայեց եւ առանց ինձ նայելու՝ հարցրեց անուն-ազգանունս, որտեղացի լինելս: Երիտասարդ ստեղծագործողների բաժնի վարիչը սեղանին դրված մատյանի մեջ գրանցեց անուն-ազգանունս եւ պատուհանից դուրս նայելով՝ ասաց. «Երիտասարդ, դուք 271 համարն եք»: Ես ոչինչ չհասկացա: Գրողը բացատրեց. «Այսինքն՝ քեզնից առաջ արդեն 270 հոգի այդպիսի տետր է ներկայացրել»: Տետրս վերցրի, դուրս եկա:

Երբ գնացի տուն, նոր սկսեցի լրջորեն մտածել, թե ինձ հետ ինչ է կատարվել եւ փորձեցի տետրը գցել կրակի մեջ, մայրս չթողեց: Միայն մայրս էր զգում, որ իմ հոգու մի մասը դրել էի այդ տետրի մեջ:

Երբ տեսա, խորապես հիասթափվել էի մարդկանցից, ամեն ինչից, բայց շարունակում էի ստեղծագործել հենց այնպես, ինքս ինձ համար: Բայց հաճախակի հորվածներ էի գրում շրջանային, մեկ-մեկ էլ հանրապետական մամուլի համար:

Մանկավարժական ինստիտուտում հեռակայրոյի իրավունքով 1962թ. անցա մանկավարժական աշխատանքի, սկզբում՝ Քաջարան քաղաքի պրոֆտեխնիկական ուսումնարանում, հետո՝ հայրենի գյուղի դպրոցում: Այդ տարիներին նոր էր կառուցվում Ազարակի պիլեծամուլիբեռնային կոմբինատը: Տարվա մեծ մասն ուսումնարանի մանկավարժական կոլեկտիվը՝ իր 200-ի հասնող աշակերտներով, գտնվում էր Ազարակում: Այստեղ ողջ ուսումնարանը գործնական (պրակտիկ) աշխատանքներով օգնում էր կոմբինատի կառուցմանը: Կոմբինատի կառուցման ընթացքն ուսումնասիրելու համար Ազարակ էր ժամանել Հայաստանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Յակոբ Ջարոբյանը: Նրա գալու առթիվ խոսք պիտի ասվեր: Տարբեր կոլեկտիվներ, հիմնարկ-ծեռնարկություններ պիտի գեկուցեին իրենց ներդրումները եւ անելիքների մասին: Քաջարանի N16 պրոֆուսումնարանի կոլեկտիվի անունից ես հանդես եկա: Ելույթս բավական լավ տպավորություն թողեց: Ուսումնարանում աննկատ կերպով դարձա հեղինակություն: Հետագայում պրոֆուսումնարանի տնօրեն Հակոբյանյանն ավիստանքով բաժանվեց ինձնից, երբ եկա իմ ծննդավայրի դպրոցում աշխատելու:

Դպրոց մտա որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Երկու-երեք տարի աշխատեցի, ավելի շուտ ինձ աշխատեցրին որպես ֆիզկուլտուրայի դասատու: Բայց որպես մանկավարժ-ուսուցիչ՝ դժվար էի հարմարվում իմ վիճակին: Ֆիզկուլտուրա պարապելն իմ բանը չէր:

Դպրոցի տնօրենությունը համառորեն չէր ուզում տեսնել իմ մանկավարժական, ստեղծագործական-գրական ունակությունները: Բայց դպրոցից դուրս ես կայանում էի: «Չանգեզուր» թերթում մի բանաստեղծություն էի գրել՝ արձակագիր Սուրեն Այվազյանին նվիրված: Գրողը կարողացել էր, զարմացել, հուզվել, հիացել եւ ցանկություն հայտնել հանդիպել ինձ հետ:

«Ա՛յ տղա, - ասաց, - դու ինձ ավելի լավ ես հասկացել, քան իմ բոլոր քննադատները միասին վերցրած»:

Ես, իհարկե, այդ խոսքերից ինձ շատ լավ զգացի, բայց մյուս կողմից էլ հասկացա, որ գրողը նկատի ունի իմ անկեղծությունն իր եւ իր ստեղծագործությունների նկատմամբ: Ես, իրոք, սիրում էի Սուրեն Այվազյանին նախ որպես մեծ գրողի, եւ այնուհետեւ որպես մեծ խնձորեսկցու: Դրանից հետո սկսվեց մեր բացառիկ մտերմությունն իրար հետ: Գալիս էր գյուղ, առաջին հերթին մեր տուն էր այցելում: Գորիսում մի սենյականոց բնակարան ուներ: Հանդիպում էինք այնտեղ: Մեր գրույցների թեման գրականությունն էր:

Ես գիրք գրեցի Սուրեն Այվազյանի մասին ու երկար մտածում էի՝ ինչպես վերանագրեմ այն: Երկու տարբերակ ունեի՝ «Իմ Այվազյանը» եւ «Մեր Այվազյանը»: Ընտրեցի «Մեր Այվազյանը», քանի որ նա իրոք իր ժողովրդի սիրելին էր:

60-ականների վերջերին արդեն



Արակղի Ճափուրյան, խորհրդային բանակի զինվոր, 1959թ.



Հայրը՝ Երվանդ Ճափուրյանը, 1908-1942թթ.



Արակղի Ճափուրյանի ընտանիքը, 1981թ.



Արակղի Ճափուրյանը դասընկերոջ՝ Մեդրու «Արաքս» թերթի խմբագիր Արամայիս Սարգսյանի հետ

Քիչ թե շատ ճանաչված ուսուցիչ էի շրջանում: Միշտ ընդգրկվում էի հայր լեզվի ե գրականության ուսուցիչների հանձնաժողովում, որ ստուգում էր ոսկե եւ արծաթե մեդալների հավակնորդ աշակերտների գրավորները: Միտով մասնակցում էի մանկավարժական ընթերցումներին, որոնք տեղի էին ունենում Երեւանում: Իմ աշխատանքները միշտ արժանանում էին բարձր գնահատանքի: Ելույթներ էի ունենում ուսուցչական հավաքներում եւ խորհրդակցություններում: Ուսուցչությունն ինձ համար դարձել էր ստեղծագործական, առիթընդ աշխատանք: Հավիշտակված ընթերցում էի մեծ մանկավարժներ Լուչինսկու, Մակարենկոյի, Սուխոմլինսկու եւ այլոց աշխատությունները եւ փորձում գործնականում կիրառել նրանց մտտեցումները:

1967-ին ավարտեցի ինստիտուտը: Ես վերադարձա գյուղ եւ շարունակեցի մանկավարժություն: Մինչդեռ կարող էի մնալ մայրաքաղաքում, կապվել մեծ մշակույթի, մեծ գրականության հետ: Բայց այդպիսի կյանքն ինձ համար չէր: Ես միշտ խաղաղ անկյուն եմ փնտրել: Իսկ ինձ համար աշխարհի ամենախաղաղ անկյունը մեր գյուղն էր՝ թանկագին մորս մոտ: Իմ գործը՝ դասավանդել երեխաներին ու համգիստ վերադառնալ տուն, հարիր էր ինձ ներառել խարհին:

Այդ ժամանակներում դպրոցներում ստեղծվել էր վարչական նոր հաստիք, որ կոչվում էր արտադասարանական եւ արտադրոցական աշխատանքների կազմակերպիչ, կրճատ՝ կազմակերպիչ: Ես ոչ թե դարձա, այլ ինձ դարձրին կազմակերպիչ: Ինքնին հետաքրքիր աշխատանք էր իմ գործելակերպին հարազատ: Գործս բոլոր տարիքի աշակերտների հետ էր, իսկ գլխավորը միջոցառումների կազմակերպումն էր, ուսուցիչների, ծնողների եւ աշակերտների նպատակասլաց համագործակցության ապահովումը, որի արդյունքում պետք է լուծվեր սերունդի ճիշտ դաստիարակության խնդիրը:

Այդ ընթացքում աստիճանաբար մանկավարժի իմ հեղինակությունը տարածում էր ստանում, որի մեջ արհեստական ոչինչ չկար: Համրությունն ինձ դրել էր լավագույն մանկավարժների շարքում, եւ դա ինձ լիովին բավարարում էր: Դա, իհարկե, վերադաս կոչված կազմակերպությունները հաշվի չառնել չէին կարող: 1971թ. նշանակվեցի դպրոցի ուսումնական մասի վարիչ (ուսմանավար): Սա արդեն այն բնագավառն էր, որտեղ ինձ համար դժվար ոչինչ չկար: Հինգ մատիս պես պատկերացում էի իմ անելիքը: Ինչ վերաբերում է ստեղծագործական աշխատանքին, այն միշտ ինձ հետ էր: Միշտ էլ դրա համար ժամանակ գտնում էի: Հաճախ գիշերներն էի ստեղծագործում լռության պայմաններում: Մի սովորություն էլ ունեի՝ սովորել ժողովրդից, ունկնդիր լինել նրա պատմություններին, լսել մարդկանց, ընկնել ժողովրդական մտածողության խորքը: Ես հավաքում էի ժողովրդի կողմից ստեղծված հաճախ պարզունակ, միամիտ, բայց բնական քաղցրություն ունեցող ստեղծագործություններ՝ առածներ, ասացվածքներ, իմաստախոսություններ, խաղեր, խաղիկներ: Արդյունքը եղավ իմ հեղինակած «Ձանգեզուրյան տաղեր» գիրքը:

Հասցնում էի նաեւ հողվածներ գրել շրջանային եւ հանրապետական թերթերում: «Սովետական դպրոց» թերթը պարբերաբար տպագրում էր մանկավարժական թեմաներով գրված իմ հողվածները: Դարձել էի «Ձանգեզուր» թերթի մշտական թղթակից: Համոզեւ էի գալիս արտադրության առաջավորների մասին գրված գրական դիմանկարներով, անդրադառնում դպրոցական կյանքի խնդիրներին: Ամեն տարի մասնակցում էի շրջանային, այնուհետեւ հանրապետական մանկավարժական ընթերցումներին: Լավագույնները հրատարակվում էին առանձին ժողովածուով: Ես էլ երկու անգամ ժողովածու մտա: Մի օր էլ, երբ հանձնարեցի եկավ «Գարուն» ամսագրի այն ժամանակվա խմբագիր Ան Ժելա Հակոբյանը եւ պատեհ առիթով եղավ մեր տանը, ինձ խորհուրդ տվեց թղթակցել ամսագրին: Ես հետեւեցի նրա խորհրդին: Մի երկու-երեք ստեղծագործություն «Գարունը» տպագրեց: 1977 թվականին

«Ձանգեզուր» թերթի խմբագիր Սերյոժա Ղազարյանն էլ ինձ առաջարկեց աշխատել խմբագրությունում, որտեղ սկսեցի աշխատել առանձնակի եռամսյակով: Լինում էի արդյունաբերական, շինարարական ձեռնարկություններում, հանդ ու դաշտում, գրում էի հողվածներ ոչ թե թերթի, այլ ընթերցողի համար:

Չնայած շրջանային թերթում աշխատող լրագրողի համար ինքնադրսեւորման ասպարեզը խիստ սահմանափակ էր, եւ ինՖորմացիոն նյութերի փնտրուղի մեջ խեղդվում էին մարդու ստեղծագործական ունակությունները, այնուամենայնիվ հետաքրքիր էր լրագրողի աշխատանքը, բայց ինձ վիճակված չէր շարունակել աշխատանքը թերթում: Տեղի ունեցան մի քանի իրադարձություններ, որոնցից հետո խմբագրությունում այլեւս անհնարին էր աշխատել:

Հայրենի գյուղում անցա ուսուցչական իմ նախկին աշխատանքին:

Ժամանակներն արագորեն փոխվում էին: Հասարակական կյանքի նոր պահանջներ էին առաջանում, նոր խնդիրներ էին առաջ քաշվում: Գորբաչովն անցնում է վիթխարի խորհրդային Միության իշխանության գլուխ: Երկիրը վարակվում է վերակառուցման տենդով: Խոսքի ազատության, հրապարակայնության դրոշմի տակ հայ ժողովուրդը դուրս է գալիս հրապարակ: Ժամանակի հետ ազգային-ազատագրական շարժումը նոր թափ է ստանում: 1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի մարզխորհուրդն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա պատմական որոշում է կայացնում դուրս գալ Ադրբեջանի կազմից եւ մտնել մայր երկրի՝ Հայաստանի կազմի մեջ: Այդ առթիվ Գորիսում տեղի են ունենում հզոր ցույցեր ու հանրահավաքներ: Շրջանի ողջ բնակչությունը ոտքի է կանգնում՝ ի պաշտպանություն Ղարաբաղի ժողովրդի արդար պահանջը: Ղարաբաղի ազատության համար մղված արդարացի պայքարին միանում են նաեւ հանձնարակի դպրոցի մտավորականությունը, բարձր դասարանի աշակերտները: Այդ գործում, անշուշտ, ունեի իմ դերակատարությունը:

1989թ. որոշում է կայացվում նորաստեղծ Ներքին հանձնարակի գյուղում դպրոց բացել: Գյուղն արդեն 6-րդ տարին էր՝ հիմնադրվել էր, տներ էին կառուցվել, բնակչություն կար, բայց դպրոց չկար: Գյուղի բնակիչները պահանջում էին իրենց երեխաների համար դպրոց բացել: Դպրոցը գյուղին նոր իմաստ կհաղորդեր, կամրապնդեր գյուղացիների հավատը նոր բնակավայրի նկատմամբ: Այս եւ այլ պատճառներով գյուղում դպրոց ունենալը դարձել էր հրատապ խնդիր: Եվ ահա 1989թ. մարտի 10-ին Ներքին հանձնարակում բացվում է փոքր գյուղերին հատուկ ուսումնական հաստատություն՝ դպրոց-մանկապարտեզ: Համաձայնում են դառնալ նորաբաց դպրոցի տնօրեն: Դպրոց-մանկապարտեզը տեղավորված էր երկու փայտե տնակում՝ առանց որեւէ օժանդակ միջոցների: Կարելի է ասել դաշտային դպրոց էր՝ բաց երկնքի տակ: Ամեն ինչ, սակայն, ընթանում էր դպրոցական ծրագրով եւ պահանջներով: Սերունդը կրթություն էր ստանում: Մենք՝ ուսուցիչներս, մեծ մասամբ երթեւեկող էինք, տեղական կադրեր դեռեւս չկային:

Վերելի հանձնարակից էինք գնում ներքեւի հանձնարակում դաս տալու: Եվ դասապրոցեսն անցնում էր ամենայն պատասխանատվությամբ: Ծնողները գոհ էին, որ գյուղում դպրոց կա, եւ ստիպված չէին լինում երեխաներին ուղարկել հանձնարակի դպրոց:

Իսկ օր օրի դրությունը վատթարանում էր: Թշնամին զենք ու գորք էր կուտակում սահմանի վրա, ստեղծում կրակակետեր, ռազմական օբյեկտներ: Պատերազմի հոտ էր փչում: Դժվարացավ նաեւ տրանսպորտի խնդիրը: Ուսուցիչները ստիպված ոտքով էին գնում դասի: Սակայն ոչ ոք չէր տրտնջում:

Կար հրամանատարություն, կար սահմանում պարեկություն անելու ժամանակացույց: Տղամարդ ուսուցիչներս, որ երեք հոգի էինք, ըստ այդ ժամանակացույցի՝ գնում եւ սահմանի վրա պարեկություն էինք անում: Գիշերները հրացան էինք

վերցնում, ցերեկները՝ դաս տալիս: Իսկ հակամարտությունը ժամ առ ժամ խորանում ու խորանում էր: Թշնամին այնքան սանձարձակ էր դարձել, որ բացահայտ գնդակոծում էր գյուղը:

Անվտանգության համար դպրոցից դուրս էինք գալիս, իջնում մոտակա ձորը եւ այնտեղ անցանցում դասերը:

1991-ին արդեն բոլորովին անհնարին դարձավ դասերի կազմակերպումը: Թշնամին ուղիղ նշանառությամբ տանկերով ու գրադներով արկակոծում, հրթրակոծում էր գյուղը: Կրակում էին անգամ առանձին մարդկանց վրա: Ձուհեր եղան, տներ փլվեցին: Մարդիկ իջան ապաստարանները: Մի անգամ ոտքով տուն գալիս մենք՝ ուսուցիչներս, հայտնվեցինք թշնամու նշանառության տակ: Պայթում էին արկերը մեր շուրջը, իսկ մենք հարմար փոս ու խրամատ էինք փնտրում գլուխներս թաքցնելու: Հազիվ փրկվեցինք: Հետո այսպիսի օրհասական պահեր էլի կրկնվեցին: Ուսումնական պարապմունքները չդադարեցնելու նպատակով սահմանից մի քիչ հեռացանք, դպրոցը տեղափոխեցինք վերելի գյուղ: Պարապմունքները շարունակեցինք հիվանդանոցի հարմարեցված շենքում:

Հետո սահմանների վրա թշնամու դեմ մեծ կռիվներ մղվեցին: Հետո Աստուծո խիզախների իր ջոկատով սխրանքներ գործեց: Հետո Շուշին ազատագրվեց: Հետո բացվեց Լաչինի մարդասիրական միջանցքը, երթեւեկը Գորիսից Ստեփանակերտ դարձավ սովորական: Հետո Ղարաբաղը ձգվեց մինչեւ Կուբաթլու եւ Ձանգեզան: Հետո զոհված հերոսների հուշարձաններին ծաղիկներ դրվեցին: Հետո հայոց սահմանների վրա իջավ խաղաղություն: Հետո՝ 1994-ի մայիսին, պարտված Ադրբեջանը զինադադար խնդրեց: Հետո ուսումնական հաստատություններում հաղթական տրամադրությամբ սկսվեցին հայոց դասերը: Պարապմունքներ սկսվեցին նաեւ սահմանի վրա գտնվող Ներքին հանձնարակի փոքրիկ դպրոցում, սակայն մարդիկ (ծնողները) այլեւս չէին հաշտվում դպրոցի տնակային նեղ ու անհարմար վիճակի հետ: Բնակչությունը նոր տիպային դպրոց ունենալու պահանջ էր դնում: Դա նաեւ տնտեսամշակութային նոր ապրելակերպի պահանջ էր: Այդ պահանջը, որ վաղուց կար, վերջապես դառնում է իրականություն, եւ սկսվում է դպրոցի շինարարությունը: Բայց ինձ վիճակված չէր աշխատել նորակառույց դպրոցում, չնայած շատ էի ուզում: Մարգարիտ իշխանությունների ցանկությանը եւ պահանջով նշանակվում եմ հանձնարակի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար: Այդ տարի էլ՝ 2005 թվականին, իմ ողջ մանկավարժական աշխատանքի ու վաստակի համար արժանանում եմ Մովսես Խորենացու մեդալի, որը, եթե հնարավոր լիներ, մաս-մաս կբաժանեի իմ ընկեր մանկավարժների միջեւ, քանի որ դա նաեւ նրանց վաստակի արտահայտությունն էր:

Հետո անցա կենսաբանության դպրոց: 2010թ. ընտրվեցի Հայաստանի գրողների միության Այոյնյեի մասնաճյուղի նախագահ եւ մինչեւ իմնա կատարում եմ նախագահի պարտականությունը:

1967թ. ամուսնացել եմ Սեդա Խաչատրյանի հետ (բարձրագույն կրթությամբ, ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի), ունեցել ենք չորս զավակ (երեք որդի եւ մեկ դուստր):

Ապրած տարիներին իմաստը փնտրել եմ մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքի մեջ: Ավելի քան 49 տարի աշխատել եմ որպես մանկավարժ եւ ստեղծագործել կես դար շարունակ: Միտել եմ հողն ու հողի մարդկանց: Բարությունն ու ազնվությունն են եղել իմ հոգու առաջնորդները: Միայն եմ գործել ակամա՝ մարդ արարածին հավատալու պատճառով:

Անել եմ կեղծիքը, խաբեությունն ու ընչաքաղցրությունը: Միշտ խուսափել եմ եսակենտրոն մարդկանցից: Միամտության աստիճանի հավատացել եմ բարու եւ զեղեցիկի հաղթանակին: Միտել եմ գյուղը, գյուղի համայնապատկերը: Քաղաքում ինձ ներկված եմ զգացել:

Ինձ համար հայրենիքը սկսվում է գյուղից: Գյուղը ճշմարիտ հայրենիք է: Սկսվել եմ հանձնարակից, կվերջանամ հանձնարակով:

ԱՐԿԱԴԻ ՇԱՏՈՒՐՅԱՆ

**Եվ դժվար, եւ հեշտ**

**ՍԵՐՈՒՅ ՀԱՆՎԵՐԳՅԱՆ**

■ ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ, դոցենտ, արձակագիր



Հ ա թ ա ռ Վ ր կ ա դ ի Ծ ա տ ու ը յ ա ն ն ա պ ր ե լ , ա շ խ ա տ ե լ , ս տ ե ղ ծ ա գ ր ծ է խ ն ծ ր ե ս կ ու մ՝ աս է լ է թ Գ ր ի ս ր ար վ ե ս ա տ

գետների բոհեմական կյանքից մեկուսի, հեռու: Բայց մեր հանդիպումից ի վեր ինձ թվացել է, թե մենք ծանոթ ենք վաղուց-վաղուց:

Եվ Ա.Ճատուրյանը նորացող ավյունով է ստեղծագործում: Նա գրել է բանաստեղծություններ, հրատարակել գրքեր, այսօր էլ հետազոտող-պատմաբան-բանահավաքի դեր է ստանձնել, հրատարակում է ապագայի միտումով խիստ անհրաժեշտ նյութեր, զբաղվում հրատարակչական գործունեությամբ...

Ողջունել կարելի է նրա ստեղծագործական պրպտունները, մտազբաղ ջանքերը, ճիգերը, որոնց անանց արձագանքը եղան «Գորիսապատումի» հատորները...

Մի առիթով պատվարժան Արկադի Ճատուրյան-Աստվածատրյանը, ի լուր բոլորի, հայտարարեց, թե ինքը կաղնու ման է ապրելու, ինչքան որ կարել է, մի այդքան էլ թեքված է ապրելու:

Տա՛ Աստված, որ այդպես էլ լինի, քանի որ նրա ստեղծագործական ջիղը չի անլացել, իսկ ընթերցողներն էլի սպասելիքներ ունեն:

**Նրա գրիչը չի հոգնում**

**ԼԵՎՈՆ ՍԱՅՎԱԿՅԱՆ**

■ Բանաստեղծ



Գրականությունն Ա ր կ ա դ ի Ծ ա տ ու ը յ ա ն ն ա ս պ ա ռ ե գ ն է, ու ր տ է լ չ պ ի ս ի խ ա բ ու ս ի կ

հանդերձներով էլ որ ներկայանա: Գրականությունը պիտի գա աստվածային լույսով, ունենա տիեզերական շնչառություն, աներեր հավատ, ապրեցնող ոգի:

Բազմաժանր գրող է՝ արձակ, բանաստեղծություն, բանահյուսություն, հրապարակախոսություն...

Նրա գրիչը չի հոգնում, ասելիքը չի վերջանում, նա այն գրողներից չէ, որոնք իրենց ստիպում են գրել, այլ նա է, ով չի կարող չգրել: Նա ազնվական մարդ է ու գրող, ավանդապաշտ է, միեւնույն ժամանակ տեսնում է այսօրվա հրամայականները, հենվելով ժողովրդականի վրա, կարողանում է իր ես-ը ծառայեցնել նրան: Մանկավարժի եւ գրողի իր երկուքայն մշտապես ձգտում է պաշտպանել, արժեւորել գիրքն այն արժեգրել կամեցողներից:

Լինելով ՀԳՄ Այոյնյեի մասնաճյուղի նախագահ, երիտասարդական ավյունով ու եռանդով ձգտում է մի տանիքի տակ հավաքել Այոյնյաց աշխարհի ստեղծագործողներին, ընդառաջել նրանց հնարավոր ամեն ինչով:

Ողջ կյանքը նվիրաբերելով բանասիրությանը, գիր ու գրչին, նա անխոջ մշակի համառությանը տրքեց ու տրքում է իր հնարավորությունների սահմաններում թղթին հանձնելու այն ամենը, ինչ տեղին է համարում ընթերցողի ուշադրությանն արժանացնելու:

# Հողի արյան դարավոր կանչով



## ԹԵՄԻԱ ՍԱՐԻԹՅԱՆ

■ Բանասիրական գիտությունների բեկնածու, դոցենտ

Արկադի Ծատուրյանի բազմաշնորհ ու բազմավաստակ անունը ծանոթ է յուրաքանչյուր գրասեր սյունեցու: Նա վաղուց հեղինակավոր ներկայություն է մեզանում՝ իբրև բանաստեղծ, արձակագիր, երկարամյա մանկավարժ, հրապարակախոս, խմբագիր, մշակութային-գրական ձեռնարկների փնտրված բեմախոս: Հեղինակած թանկարժեք ավելի գրքերով, կազմած ու խմբագրած մեծաթիվ ժողովածուներով ընթերցասեր հանրությանը ներկայացած գրչի անխտնջ աշխատավորն իսկապես արժանի է սրտառու զննատեսության:

Կյանքի երկարամյա ճանապարհ անցնելով՝ նա այսօր մեր կողքին է գրական-ստեղծագործական լիության մեջ, երիտասարդական ավյունով, իրավ հայի, գրողի, մտավորականի արժանապատիվ կեցվածքով, մշակութային բարձր գիտակցությամբ, հանրամարտ մարդու հավաքական մտահոգություններով ու հանձնառություններով:

Լավածանոթ լինելով Ա.Ծատուրյանի գրական նախասիրություններին՝ չեմ կարող համարումով ու հարգանքով չխոսել նրա ստեղծած գեղագիտական արժեքապայտերի մասին, որի գլխավոր երակը հուն է առնում հայրենի հողից, ավանդույթից, պատմությունից, աշխարհայացքից, ինքնուրույն հղացումից՝ մարմնավորված առավելապես արձակի փոքր ժանրաձևերի մեջ:

Գրողի, գրականության մարդու կոչմանը հավատարիմ՝ Ծատուրյանը պատմել, վավերագրել, հուշագրել է այն ամենը, ինչը տվել է նրան կյանքի լայնահուն ճանաչողությունը, կյանքի ճշմարտության անխաբ զգացողությունը: Ապրված, անհատական փորձառության բովով անցածը, վավերագրականը, ստուգատուն արձակագրի իր մտասերուններն են: Ծատուրյանի արձակը մերթ պատմվածքի կառույց է, մերթ ակնարկի պատում, մերթ տպավորապաշտ նկարագրություն, այդքանով հանդերձ՝ մի գրաշխարհի, որ վաղուց բռնել է ընթերցողի սրտի, ճաշակի հետ հարազատություն պահող երակը:

Կենսական այն ապրումներն ու տպավորությունները, որոնք բանաստեղծությանը չկարողացավ խտացնել, հանձնեց արձակի թռիչքներին եւ այդ դաշտուն արձանագրեց նվաճումներ: Հայ գեղարվեստական արձակագրության արժանավոր էջերից են Ծատուրյանի «Հողի սիրով», «Մի կրակեք հայրի վրա», «Ապրելու իրավունքով», «Առանց հայրենիք չի կարելի», «Հայրենիքը սկսվում է ծննդավայրից», «Ծուխ ծխանի» ժողովածուները, որոնցում շահեկան արժարձումներ է ստացել արդի հայ արձակում այժմեականություն պահպանող Արցախյան պատերազմի թեման: Որպես արձակագիր՝ Ծատուրյանը ձեռավորվել է հենց պատերազմի նյութի գրականացման փորձով: Արցախյան ազատամարտի թեման, առհա-

սարակ, գրողի տարերքն է եւ լայնորեն տողանցում է նրա ստեղծագործությունը:

Ծատուրյանի հիշյալ ժողովածուներում ի մի բերված գրվածքներից շատերը բնույթով փաստավավերագրություններ են, ակնարկներ, հուշագրային, օրագրային նոթեր, քան պատմվածքներ՝ գրական տեսակի հատկանշությամբ: Որոշ պատումներ դրվագային բնույթ են կրում կամ հեղինակի գրուցախոսություններն են՝ հաճախ վերամբարձ ոճավորումով: Քարոզչականությունը տեղ-տեղ բուլցարել է դեպքերի կուռ-հետեւողական զարգացումը: Բոլոր դեպքերում հեղինակը պատումի մեջ է ներթաշել իր պատերազմական տպավորությունները եւ պատմաքաղաքական բազմաթիվ տարրերի համադրությամբ իմաստավորել տեսած դեպքերն ու լսած պատմությունները ֆիդայիների կյանքից:

«Ապրելու իրավունքով» ժողովածուի առաջաբանում հեղինակը բնութագրում է նյութի տեսածիրում դիտված իրականությունը. «Մա մեր տեսած ու ապրած օրերից հյուսված գեղարվեստապատումն ապր է՝ ժամանակաշրջանի պատմական անցքերի եւ իրադարձությունների ֆունի վրա: Իրադարձություններ, որոնք իրոք պատմական են, բայց դեռ չեն հասցրել դառնալ պատմություն»:

Ծատուրյանի հեղինակած գրքերի մեծ մասը թեւ պատկանում է գեղարվեստական գրականությանը՝ իբրև պատմվածքների ժողովածուներ, այնուամենայնիվ իրական կյանքից քաղված լինելու հեղինակային հուշարկունն իսկ շեշտում է դրանց փաստագրական ենթահողը:

Գրողը ոչ մի պարագայում չի հեռանում վավերականությունից, ճանաչելի է թողնում կերպավորված անձանց՝ նշելով նրանց իրական անունները, նույնիսկ՝ մականունները: «Առանց հայրենիք չի կարելի» ժողովածուի պատմվածքներից մեկում հեղինակը գրում է. «Ուզում եմ

բոլորին մեկ-մեկ հիշել: Ամեն մեկի մասին դրվատանքի մի խոսք ասել: Զէ՞ որ նրանք արժանի են մեծարման»:

Ճնշակաբար խմբորդելով ինքնապաշտպանական դրվագները՝ ջոկատի հրամանատար Սանոյի գլխավորությամբ, փառազարդում են Ծատուրյանի ռազմաճակատային արձակը: «Առանց հայրենիք չի կարելի» ժողովածուն գրողը նվիրել է ազատամարտում զոհված խնձորեսկի ազատամարտիկներին եւ առանձնաշեշտով նպատակը՝ պատկերել «Լեզեմուրի Սանոյի ու նրա ջոկատի մարտական ուղին, սխրանքները»:

Գրողի համար դժվարին գործ համարելով ժամանակակցին կերպավորելը՝ Ծատուրյանը մտավախություն է հայտնում մի նուրբ խնդրի շուրջ՝ կկարողանա՞ արդյոք ընթերցողին համոզել, որ հերոս կարող է լինել իր կողքին ապրող, իր հետ առօրեական շփումներ ունեցող մարդը: Մարտական գործողությունների ժամանակ զոհված ազատամարտիկներին ժողովուրդն արժանապես սրբացրել է, հերոսացրել, իսկ ովքեր կռվի դաշտում ճակատագրի բարեհաճությամբ կենդանի են մնացել, այսօր ապրում են մեր կողքին՝ որպես սովորական մարդիկ: Նրանց անունն ու գործը նույնպես արձակագիրն ամենայն վավերականությամբ կյանքից տեղափոխում է գրականություն՝ ժամանակակց ընթերցողին ցույց տալու, որ նրանք երբեք չեն ծեղծվել մաքառել են թշնամու դեմ եւ կենդանի հերոսներ են՝ արժանի իր հիշատակող ու մեծարող գրչին:

Տազմապելով իր ժողովրդի ճակատագրի համար՝ Ծատուրյանն այդ տազմապե արտահայտել է ամեն կերպ եւ ամեն առիթով՝ երբեմն հռետորական-քարոզչական գեղուններով խեղդելով ասելիքը մեղ փաստագրության մեջ՝ մի կարեւոր դեպք, կենսադրվագ փրկելու եւ

պատմությանը պահ տալու առաջնահերթ միտումով:

Ազգային կյանքի այդ ծանր օրերի ակամատեսն արձանագրում է փաստը՝ չհետեւելով պատմվածքի զարգացման ներքին տրամաբանությանը՝ ջանալ կորստից փրկել Արցախյան գոյապայքարում իր հայրենակիցների սխրանքների հիշատակները: Հերոսամարտի ուշաքառան անցքերը հիշատակելու-վավերագրելու հրատապ մղումով Ծատուրյանը հաճախ գրկել է իրեն գրողական հնարքներից, երեւակայության ընձեռած թռիչքներից, կենսանյութը ստեղծաբանական-գեղագիտական մշակման ենթարկելու գրական ազատությունից, նյութի թելադրած ոճականուցվածքային յուրատիպ լուծումներից եւ ընտրել է գեղարվեստական խոսքը կաշկանդող առարկայական ճշգրտության «զսպաչապիկը»: Դրանով հանդերձ՝ նա կարողացել է պահպանել գեղարվեստական խոսքի մայր հատկանիշների մեծ մասը՝ անբռնազբոս ոճը, լեզվական դյուրահաղորդությունը, հուզավառ տողանցումները: Տարբեր գործերում նրան հաջողվել է հոգեբանական պահեր եւ ներքին դրամաներ բացահայտել: Ծատուրյանի ստեղծագործությունները հատկանշվում են ոչ միայն նյութի հետաքրքրությամբ, այլեւ հաճելի պատմողականության յուրահատուկ ոճով:

Ծատուրյան անհատի ու ստեղծագործողի ուրույն դիմապատկերն ամբողջացնում են հայրենի եզրերին նվիրված բանասիրական-ազգագրական բնույթի աշխատությունները: Ծատուրյանն առանձնահատուկ, գրեթե առաքելական նվիրվածություն ունի ծննդավայր Խնձորեսկի հանդեպ: Ընթերցողի առջեւ իր գյուղին, իր բնաշխարհին հավերժորեն սիրահարված մարդն է, հողի արյան դարավոր կանչով կրկին հողին միախառնվելու երանավետ զգացողությամբ իր կյանքի ճանապարհն անցնող գրի երդվյալ սպասարկուն, ով նույնաշունչ կափառվածքներով էլ ստեղծեց հոգեղուկ կյանքի վավերականություն ունեցող իր գեղարվեստական գործերը:

Ծատուրյանը նաեւ հնուտ բանահավաք է եւ ջանք ու մտաեռանդ չի խնայել՝ մոռացումից փրկելու բնօրրանի հոգեկոր հարստությունները եւ դրանք կրող մարդկանց՝ խնձորեսկիցներին: Ծատուրյանի պատմվածքներով, բանասիրական վկայումներով գրականությունն են մտել խնձորեսկիցների ապրելու բարոյականությունը, գունդը լեզվամտածողությունը, յուրօրինակ աշխարհատեսությունը, հնարամատ սովորություններն ու կենցաղավարությունը:

Ուշադրության են արժանի Ծատուրյանի կազմած ժողովածուներն ու անթրոլոգիաները («Սյունիքի գրողները մանուկների մասին», «Գորիսապատում», «Մեր Այվազյանը», «Ստեղծագործում է Սյունիքի երիտասարդությունը» են այլն), որոնք շարքում առանձնակն է մեծանուն հայրենակցին՝ Սուրեն Այվազյանին նվիրված հուշագիրքը՝ ծնված գրողի հետ մարդկային ու ստեղծագործական շփումներից, գրական ու բնօրրանային ծագումնաբանության հարազատությունից: Հուշապատումների, գողտրիկ ճեպագրույցների, տպավորիչ ինքնաբնութագրումների ու ծոներգերի այդ անհրաժեշտ ժողովածուն գալիս է լրացնելու ոչ միայն Այվազյան արձակագրի մասին ընթերցողի հոգեդարանում եղած պաշարը, այլեւ նրա առջեւ բացում է Այվազյան մարդու գեղեցկորեն պարզ ու հարազատ հոգեաշխարհը:

Ծատուրյանի «Թուրուսի խութի գրավումը» գրքից մինչեւ «Հուլիսի ճանապարհ» երկարող մայր երակն իրապես կազմում է գրական մի ծրագիր, որի բնութագրումը մեկ բառով ամփոփելու համար կարող ենք դիմել վկայագրություն եզրույթին:

Մեծապես խրախուսելի են նաեւ Ծատուրյանի՝ որպես ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահի ջանքերը՝ գրական գործի կազմակերպման, ստեղծագործական ծրագրերի իրականացման արդյունավոր փաստերով:

Հուսանք, որ Արկադի Ծատուրյանի միտքն ու գրիչն այսուհետ էլ դալար ու բեղուն կլինեն՝ ստեղծագործական նոր հղացումներով առլեցուն: ■



- ՍՄՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**Նեղինակած գրքեր**
1. «Կատակում, զվարճախոսում, սրամտում է խնձորեսկը» - 1998թ., 63 էջ
  2. «Թուրուսի խութի գրավումը» (վիպակ) - 1998թ., 82 էջ
  3. «Հողի սիրով» (բանաստեղծություններ) - 2001թ., 280 էջ
  4. «Արքաների խիղճը» (առակներ) - 2000թ., 80 էջ
  5. «Ձանգեզուրյան տաղեր» (ժողովրդական քառյակներ) - 2001թ., 62 էջ
  6. «Մի կրակեք հայրի վրա» (պատմվածքներ) - 2002թ., 151 էջ
  7. «Ապրելու իրավունքով» (պատմվածքներ) - 2003թ., 124 էջ
  8. «Առանց հայրենիք չի կարելի» (պատմվածքներ) - 2004թ., 144 էջ
  9. «Մարդ էլ կա, մարդ էլ» (արձակ եւ չափածո) - 2004թ., 248 էջ
  10. «Հայրենիքը սկսվում է ծննդավայրից» (պատմվածքներ) - 2005թ., 145 էջ
  11. «Ծիծաղում է խնձորեսկը» - 2006թ., 350 էջ
  12. «Ծուխ ծխանի» (պատմվածքներ, նովելներ) - 2007թ., 320 էջ
  13. «Գորիսապատում-Ա» (Գորիսի պատմություն) - 2010թ., 213 էջ
  14. «Խոզմավար» (գյուղի պատմություն) - 2010թ., 160 էջ
  15. «Գորիսապատում-Բ» (Գորիսի պատմություն) - 2011թ., 250 էջ
  16. «Մեր Այվազյանը» (գրողի դիմանկար) - 2012թ., 210 էջ
  17. «Սյունիքի գրողները մանուկների համար» (ժողովածու) - 2011թ., 170 էջ
  18. «Գորիսապատում-Գ» (Գորիսի պատմություն) - 2012թ., 270 էջ
  19. «Ներքին խնձորեսկ» (գյուղի պատմություն) - 2012թ., 218 էջ
  20. «Սյունիքի եւ սյունեցու մասին» (մեմորիալ) - 2011թ., 170 էջ
  21. «Հուլիսի ճանապարհ» (չափածո, արձակ, դրամա) - 2013թ., 296 էջ
  22. «Գորիսապատում-Դ» (Գորիսի պատմություն) - 2014թ., 235 էջ

# Առաջին մարտը

### Հատված «Վառվող տանիքներ» վեպից

Պատերազմը դավադրորեն ու գետնաբարձ սողում էր դեպի հայոց հարավային սահմանները:

Քարվաճառից մինչև Ջանգելյան կանգնել էին ազերիների ստվար զորամիավորումները՝ թալանչի խաժանուժների հոծ խմբերով, հույս ունենալով, որ շուտով Ջանգելյանը ծնկի են բերելու, եւ թալանի ասպարեզ է բացվելու:

Գորիսի ուղղությամբ թշնամին կուտակել էր իր հրետանու զգալի մասը, բազմաբանակ զորք ու զինամթերք:

Սահմանի իրենց մասում ազերիները ստեղծել էին հզոր ամրություններ, որտեղից տանկերով ու «գրադ» կայանքներով ամխափան ու անընդմեջ հրետակոծում էին հայոց սահմանային բնակավայրերը:

Գորիս քաղաքի եւ շրջակա հայ գյուղերի վրա թշնամին կրակ էր թափում բոլոր զինատեսակներից:

Թշնամու ներխուժման վտանգը մեր սահմաններից ներս օրեցօր դառնում էր հավանական:

Գորիս քաղաքում ստեղծված «Պաշտպանության խորհրդի» նախաձեռնությամբ շրջանի բոլոր գյուղերում ու քաղաքում ստեղծվել ու շարունակում էին ստեղծվել երկրապահների կամավորական մարտական ջոկատներ: Երջանի բնակչությունը վատաս էր, որ համծիմս այդ ջոկատների, ինքն ունի հուսալի պաշտպաններ:

Պարզ, թափանցիկ առավոտ է: Արեւի պռունկը հազիվ է դուրս եկել Մատաղասարի բաշից: Աստղերը հանդարտորեն չքանում են տեսողությունից: Հեռու հորիզոնի վրա ցրվում է գիշերվա մեզը: Ձորափերին, ցածրադիր հարթավայրերի վրա փռված են լեռների երկար ստվերները: Շուտով աղջամուղջ բոլորովին ցրվում է, եւ վաղորդյան ասրտուռն օդի մեջ անուշ ճկում է մոշահավը:

Շուրջը խաղաղ, խաղաղ է: Ու հանկարծ ոնց որ երկինքը պատռվի: Մի արկ վնգում է օդում ու ծանր շրխկում գյուղամիջում, ինչ-որ տեղ: Հետո՝ շրախակ, շրախակ, սուրում են արկերը, պայթում այս ու այնտեղ փողոցներում, բակերում, տանիքների վրա:

Սանոն լարումից շփում է ճակատը, ինքնաբերաբար պրկվում են բռունցքները, փոս ընկած անքուն աչքերից կայծեր են թռչում:

Սանոն տխրությունը հոնքամիջում հավաքած՝ տղերքին հրավիրում է գերանածածկ խրամուղու ազատ ու լայն անկյունը, եւ ինչպես մուրճով երկաթին հատ-հատ խփես, կտորակ է նրա ծայրը:

- Որոշումն այս է, տղերք, - վաղը լուսաբացին գրոհել դիմացի ազերական կրակակետ-պոստի վրա: Սահմանի վրա շնթռնած թշնամին պետք է հետ շարտվի: Ով պատրաստ է իր ժողովրդի համար մեռնել, թող գա ինձ հետ:

Մի պահ տիրում է լռություն: Հետո տղերքն ուս ուսի գալիս կանգնում են Սանոյի մոտ: Այսինքն թե՛ վերջ, վճիռը կայացված է, որտեղ հրամանատարը, այնտեղ էլ մենք:

Լուսադեմին Սանոյի մոտ են գալիս լեյտենանտ Ալիկը եւ մայոր Քոչուկը: Սանոն նայում է ժամացույցին:

- Ժամանակը չէ՞, մայոր, տղաներին արթնացնել:

- Ե՛րիշ ժամանակն է, - գործնական տոնով ասում է մայորը: Լեյտենանտ Ալիկը փափուկ ու սովորականից ցածր հնչեցնում է «Վերկյաց» հրամանը:

Ոնց որ զսպանակից թռչեն գետնին, տղերքն իսկույն ելնում են տեղներից, փութով հագնվում, ձգվում, զգաստանում, կանգնում կողք կողքի՝ կրծքներն առաջ պարզած:

Հպարտության, ինքնաբավականու-



## Ժողովրդական խաղիկներ

*Սերն արբեշում, առյաս է, Ոսկով լիքը կարաս է, Հացն ու սերը թե որ կան Բախտը միշտ անպակաս է:*

*Լաստ խութի բաշում եմ, Օրս դանդաղ մաշում եմ, Կյանքս անցավ, բայց էլի Քո կարոտը բաշում եմ:*

*Ես մի ծառ եմ՝ ձյուզս չոր, Արմատներս հողում խոր, Թե իմ ձյուղին բույն դնես, Ես կծաղկեմ նորից նոր:*

*Չյունը կամաց կմաղի, Շունչս օդում կպաղի, Բա աղջիկը ջահելին Էդրան անխիղճ կղաղի՞:*

*Ի՞նչ ես կանգնել այդ ցրտում, Ո՞ւմ ես փնտրում, չես գտնում, Տար տեղի՞ ես ման գալիս, Արի, տեղ կա իմ սրտում:*

*Այ տղա՛, ծուռ մի գնա, Անտարբեր, լուս մի գնա, Քո փնտրածը հենց ես եմ, Ուրիշ տեղ գուր մի՛ գնա:*

*Սուտ կա՛ հորից է գալիս, Սուտ կա՛ մորից է գալիս, Ինչքան էլ հետ ես տալիս, Էլի նորից է գալիս:*

*Խեղճից ո՞վ է հարցնում, Որբից ո՞վ է հարցնում, Կացին ունես, հարվածիր, Կորից ո՞վ է հարցնում:*

*Խոտատնում է, խոտատնում, Մեծ բաներ է խոտատնում, Բայց սեփական ծառերը Չորանում են բոստանում:*

*Անի փոխվեց ամեն ինչ, Գահի փոխվեց ամեն ինչ, Չհասկացանք, թե ինչպես Շահի փոխվեց ամեն ինչ:*

*Գործերս ձախվում են հիմա, Ամեն ինչ ձախվում է հիմա, Չուլ-փախսի արժեքը Երկրից կախվում է հիմա:*

*Տարին խաղաղ տարի լինի, Լուսաբացը բարի լինի, Ինչ որ լինի այս աշխարհում Թող միշտ մարդավարի լինի:*

*Հնձել եմ, բերքը չկա, Կերտել եմ՝ չենք չկա, Մտել եմ մի մութ աշխարհ, Փնտրում եմ՝ ելքը չկա:*

*Մեր ձորը խորություն ունի, Մեր ձորը նորություն ունի, Հազար տարի էլ անցնի, Մեր ձորը նորություն ունի:*

*Այ իմ վառված ժողովուրդ, Այ իմ մաղված ժողովուրդ, Քո երկրից ո՞ւր ես գնում, Այ իմ շաղված ժողովուրդ:*



Սանասար Բեգլարյան, Խնձորեսկի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար

բյան շող կա նրանց դեմքերին, վստահության ու հավատի խորին մի արտահայտություն, որ ունենում են առաջին անգամ ինքնաբերական փորձարկողները:

Սանոն մոտենում է շարքին. բոլորը ժպտում են, նրանց արծվեմի հայացքներում ցրում է վրիժառության պատրաստականությունը: Տղերքը կանգնած են ձիգ, զգաստ, անբեր ու ինքնավստահ: Վեներտուկյան ոչ մի հետք: Կարծես աշխարհում ոչ ահ կա, ոչ մահ: Միայն գրոհի հրաման տուր, եւ նրանք միակամ կնետվեն բարբարոսության բոլոր սահմաններն անցած թշնամու դեմ:

Շարքի գլուխ կանգնած է Կուճի Մինասը, հետո Հենոն է, Սեյրանը, Սուրիկը, Սարիբեկը, Վահրամը, Արմեն-Պուղին, Սեւադան, Բորլը, Ափոն, Ղրղիլը, Էղիկը, Բոզի դային... Ալիկ Կուրգուզազովը՝ Բրյանսկ առնական կեցվածք ունեն, ինչպիսի՛ք քամահրանք վախի, ահ ու մահի նկատմամբ:

Տղերքը գիտեն, հրամանատարը քիչ է խոսում: Այն ամենը, ինչը որ պիտի ասի, հասկացնում է մեկ-երկու բառով: Սակայն այս անգամ մի քիչ շալլ է գտնվում: Կոկորդում օդ հավաքելով՝ զվարթածայն ասում է.

- Տղերք, տասը րոպեից հետո սկսում ենք գրոհը թշնամու դեմ: Առջեւից կգնա լեյտենանտ Ալիկի զրահամեքենան: Աստված՝ ձեզ պահպանեմ:

Տղերքը սեղմում են զենքերի խզակները, լարվում: Հրամանատարը մանր ժպտում է, վստահ ու շեշտ դուրս գալիս խրամատից: Հենց այդ պահին էլ շառաչյունով օդ է բարձրանում ազդանշանային հրթիռը: Ալիկի զրահամեքենան սուրում է առաջ: Տղերքն ինքնամոռաց վազում են զրահամեքենայի հետեւից՝ ցատկելով դար ու փոտերի վրայով: Զրահամեքենայի հռնդուցին խառնվում են ավտոմատավորների համազարկերը: Աջից ու ձախից աշխատում են նռնակակետները:

Սանոն, նրա հետեւից տղերքը, ամբողջ թափով վազում են առաջ: Զրահամեքենան ամենի արագությամբ շարունակում է հաղթահարել վայրենաբաց թեքությունը: Կրակոցները խառնվում են իրար: Օդում գնդակների հրավառություն է: Անակնկալի եկած թշնամին փորձում է կանգնեցնել տեսիլքի պես դեպի իրեն գլորվող խեմքերի գրոհը:

Թշնամին ինքը զարմացած է, շշմած օրը ցերեկով, բաց դաշտով, երկու տասնյակ մարդկանցով ու մի զրահամեքենայով հարձակվել երկու թնդանոթ, երկու

գնդացի, զրահամեքենաներ, ավտոմատավորների ջոկատ ունեցող ամրության վրա: Իսկապես անսպասելի է: Ոնց որ գառնափափից մի հսկայական ժայռաբեկոր գլորվի ու գլորվի ցած ու քանի գնա, թափն ավելի ուժգնանա:

Կանգնել, հապաղել չկա...

Թշնամին չի հասցնում կարգին պաշտպանություն կազմակերպել: Քանի գնում, անսպասելի գրոհից ցնցված թշնամու կրակը դառնում է ցաքուցրիվ: Հակառակորդի գնդացիներից մեկը լռում է, դադարում է նռնակակետներից արձակված կրակը:

Ալիկի զրահամեքենան ընդհուպ մոտենում է թշնամու դիրքերին: Թվում է, թե տղերքը պետք է դիմեն ձեռնամարտի: Սակայն ազերիները չեն դիմարդում եւ «ալլախ» գոչելով՝ խելակորույս փախչում են: Տղերքը մոտենում են թշնամու դիրքերը: Ալիկի զրահամեքենան հաղթական շրջադարձ է կատարում թշնամու զորանոց-պոստի հրապարակում ու ծանրածանր կանգնում տունդար-

ծի ճամփին: Տղերքն ուրախությունից սկսում են ցատկոտել՝ զենքերը դեպի վեր պարզած: Թշնամու կրակակետը գրավված է:

Առաջին անգամ մարտի են ելել թշնամու դեմ, եւ թշնամին, թողնելով մեծ քանակությամբ ռազմամթերք ու տեխնիկա, ճողպարել է:

Տղերքը, մեկը մյուսին նայելով, փնտրում են ռուս զինվոր Տոյային, որ ավտոմատ հրացանի հետ միասին ուսից կախել է միշտ իրենից անբաժան կիթառը: Արմեն-Պուղին զվարթածայն դիմում է մեկուսի կանգնած Տոյային:

- Նվազիր, Տոյա:
- Այստե՛ղ, - զարմանում է:
- Հենց այստեղ, թշնամու խրամատի վրա, այս խեղված գնդացիների ու թնդանոթների մոտ:

Տոյան հարցական նայում է հրամանատարին, որ նշանակում է՝ կարելի՞ է: Սանոն ժպտում է: Տոյան հասկանում է, որ դա համաձայնության նշան է: Ուսից հանում է կիթառը, եւ մատներն իսկույն գտնում են լարերը եւ աշխույժ վեր ու վար անում: Սկզբում դանդաղ ծլնում է հայկական «շալախոն», հետո թափով արագություն վերցնում: Հենոն ու Սեւադան ցատկում են ասպարեզ: Նրանց են միանում տղաներից շատերը: Ծայր է առնում մրրկային մի խուլապար:

Շուտով Սանոն տունդարծի հրաման է տալիս:

Սահմանի վրա գրոհայիններին գալիս ողջունում են գյուղի բնակիչները, երկրապահների հրամանատարները, ազատամարտիկները:

Մատաղասարը ողողվում է արեւի լույսով, եւ արշալույսի շամանդաղի միջից ժպտում է լազուր երկինքը:


Շնչելը դառնում է դյուրին: Տղաները տուն են դառնում թեթեւ քայլերով, պայծառ աչքերով, հպարտ ու ինքնավստահ այն գիտակցությամբ, որ գալիք օրերում ավելի կատաղի ու թեժ մարտեր են լինելու, եւ իրենք պատրաստ պիտի լինեն այդ ամենին:

Դեռ տեղ չհասած՝ սկսվում է թշնամու հրետակոծությունը: Երկարատեւ ու հոծախումբ պարբերությամբ հրետակոծվում է Գորիս քաղաքը, Խնձորեսկը, Տեղը, Կոռնիձորը:

Շրջանը դառնում է սզվոր, սեւազգեստ: Տղերքը սեղմում են բռունցքները, սեղմում ատամները, լարվում, կրակվում: Նրանց կայծկլտացող աչքերում վճռականություն է շողում եւ ատելի թշնամու դեմ գոտեմարտելու հաստատակամություն:



Ծանոթապալայր Խնձորեսկե



Վին գյուղ

«Իմ հայրենասիրությունը սկիզբ է առնում Խնձորեսկից»

ԱՐԿԱՂԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Հարցազրույց համարին

## ԱՐԿԱՂԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ. «Եթե գրողը սպեղծագործելիս երկունքի ցավեր չի ունենում, եթե փառապանքից չի ծնվում երկը, ապա այն արժեքավոր չի կարող լինել»

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 2

Նամենտ չէ: Մտավորականը պիտի բարձր հեղինակություն վայելի, ինչպես օրինակ Արցախյան շարժման տարիներին ուներ Սերո Խանգաղյանը:

– Համաձայն եք, որ գրականությունը մեր կյանքի, հասարակության ներկա ընթացքի վրա գրեթե ազդեցություն չունի:

– Ցավով պիտի նշեմ, որ գրականությունը մեր հետևից է գնում, այլ՝ ոչ առջեից, այն ոչ մի ազդեցություն չունի մեր աշխարհայացքի ձևավորման վրա, որ լուրջ բացթողում է:

– Ձեր կյանքի նշանավոր իրադարձություններից է Ներքին Խնձորեսկում դպրոց-մանկապարտեզի հիմնումը:

– Հաշվի առնելով Ներքին Խնձորեսկի բնակիչների՝ շրջանային խորհուրդ ներկայացրած պահանջը՝ 1989թ. մարտի 10-ին Ներքին Խնձորեսկում փոքր գյուղերին հատուկ դպրոց-մանկապարտեզ հիմնվեց, որի տնօրեն նշանակվեցի ես: Հիմնադրման ժամանակ մանկապարտեզի սաներն ավելի շատ էին՝ մոտ 33 սան, իսկ դպրոցն ընդունել է 23 աշակերտով, բայց երբ արդեն աշխատանքից հեռացել եմ, 54 աշակերտ էր այնտեղ սովորում: Պատերազմական եւ հետպատերազմական բազում խոչընդոտներ հաղթահարելով՝ հասանք նրան, որ

դպրոցը դարձավ միջնակարգ, որից հետո սկսվեցին դպրոցի բարեկարգման աշխատանքները:

– Ո՞րն է գրականության խնդիրը դպրոցում, բուհում եւ ընդհանրապես աճող սերնդի դաստիարակության գործում:

– Այսօր Հայաստանի դպրոցները, բուհերը, կարելի է ասել, չունեն դաստիարակության հավատարմ, այսինքն՝ ուսուցիչը չգիտի, թե ինչ դաստիարակի եւ ինչպես: Նա սոսկ դասատու է, ով իր չոր ու ցամաք դասն է տալիս: Խորհրդային Միության տարիներին պարտադիր առանձնացնում էին դաստիարակության տեսակները՝ հայրենասիրական, մտավոր, ընտանեկան, գեղագիտական, բարոյական եւ այլն: Այսօր դրեք այդ չափանիշներն ուսուցչի, տնօրենի առաջ. սոսկ ասում են հայրենասիրություն, բայց թե դա ինչպես պիտի սերմանվի, չեն մանրամասնում: Երբ Ղարաբաղյան ազատամարտի մասին գրում էի, կարող էի նաեւ արատավոր երեւոյթներ նկարագրել, բայց դա չեմ արել, քանի որ գիրքը պիտի գուտ դրական կողմեր ներկայացներ եւ հայրենասիրություն սերմաներ:

– Երեխայի արժեհամակարգի ձևավորման բացը նույնիսկ հեռուստատեսությամբ, ռադիոյով չեն փորձում լրացնել, իսկ ավելի ճիշտ՝ այդ բացը

խորացվում է:

– Ներկայիս հեռուստատեսությունն էլ, ռադիոն էլ շուկայական հարաբերությունների վրա են հիմնված: Հատկապես այդքան լայն տարածում ստացած հեռուստատեսությունը ամբողջովին ապականում են եւ մեր լեզուն, եւ մարդու հոգեբանությունը:

– Դուք այն եզակի գրողներից եք, ով իր ստեղծագործություններում անընդհատ արձարծում է Ղարաբաղյան պատերազմի թեման: Ի՞նչ տեղ ունի Ղարաբաղյան հերոսամարտը Ձեր ստեղծագործության մեջ:

– Երբ Հայրենական մեծ պատերազմն ավարտվեց, մոտ 20-30 տարի խոսում էին դրա մասին, որն արտահայտվում էր եւ գրականության, եւ քանդակագործության, եւ ճարտարապետության մեջ, եւ կերպարվեստում: Բայց այսօր զարմանալի անտարբերություն եմ նկատում Ղարաբաղյան ազատամարտի գրականացման նկատմամբ: Մենք մեր դարավոր գոյության ընթացքում շատ բան ենք կորցրել. մեր պատմությունը կոտորածների, վշտի, լացի պատմություն է եղել, եւ հազիվ 20-րդ դարում հաղթանակ ենք արձանագրել, որ անզանահատելի իրադարձություն է մեր ժողովրդի պատմության մեջ: Ըստ այդմ՝ մեր գրականությունը պիտի ամբողջովին հեղեղվեր այդ թեմայով, մինչդեռ այսօր լույս տեսնող ստեղծագործությունների մի մասն անհասկանալի է, երբեմն էլ պատմական իրադարձությունների խեղաթյուրում է:

– Ես այն կարծիքին եմ, որ Շուշին նաեւ գորիսեցին է ազատագրել, Ստեփանակերտը՝ նաեւ ստեփանակերտցիներ, այսինքն՝ սա համազգային հաղթանակ է: Ես պարտավոր եմ այդ թեման ներկայացնել, որ վաղը դրանով սերունդ դաստիարակվի, ժամանակներն անցնելու են, ի՞նչ գիտեք, թե այսօրվա մեր կրթի հերոսներն էլ սուրբ չեն դառնալու:

– Գեղարվեստական գրականությունն իր ընդհանրացումների, ամփոփումների մեջ ազատ է, կարող է դա

անել, բայց հենց դարաբաղյան թեմայով վավերագրության, պատմագրության մեջ բավականին լուրջ աղավաղումներ ունենք, բացահայտ միտում կա՝ ամեն մարդ վերմակը դեպի իրեն է ձգում:

– Ցավալիորեն պիտի նշեմ, որ լույս տեսնող հրապարակումներում բավականին լուրջ աղավաղումներ կան, ինչը մտահոգվելու տեղիք է տալիս. պատմությունը չի կարելի աղավաղել:

– Ներկայացրեք, խնդրեմ, Ձեր առաջիկա ծրագրերը:

– Ունեն տպագրվելիք չորս գիրք: Ցանկություն ունեմ «Մեր գյուղի մեծերը» գիրքը գեղարվեստապատում ստեղծագործություն դարձնել՝ ներկայացնելով նաեւ նրանց գերդաստանները: Ղարաբաղյան ազատամարտի մասին «Վառվող տանիքներ» վերնագրով վեպ եմ գրել, որը դեռ պետք է տպագրվի: Մանկավարժական պատմվածքների շարք պիտի լույս ընծայեմ: Ես այն կարծիքին եմ, որ կրթության հերոս անիծել են, եւ դպրոցներում ամեն ինչ կա՝ բացի կրթությունից: Երկար տարիներ աշխատելով այդ համակարգում՝ նպատակային եմ համարում մանատիպ պատմվածքների տպագրումը, բայց չգիտեմ՝ ընթերցող կլինի՞, թե՞ ոչ, քանի որ այսօր ընթերցող ունենալու հարցը գրողի համար ամենամտահոգիչն է:

– Ինչո՞ւ ընթերցողը հեռացավ գրքից:

– Իժվարանում եմ պատասխանել, բայց կարող եմ ասել, որ գրականությունից նահանջը շարունակվում է:

– Արեւմտահայ բանաստեղծ Դանիել Վարուժանն ասում էր. «Բանաստեղծ ըլլալ եւ մայր ըլլալ, մույն բանն է»: Դուք ինչպե՞ս կընդհանրացնեք բանաստեղծի կոչումը:

– Եթե գրողը ստեղծագործելիս երկունքի ցավեր չի ունենում, եթե տառապանքից չի ծնվում երկը, ապա այն արժեքավոր լինել չի կարող: Ըստ իս՝ գրողը ժողովրդի ծառան է, գրականությունը ժողովրդի համար է, նրանից դուրս գրականություն չկա:

– Ե՞րբ կարող է արվեստագետը մահվանից չվախենալ:

– Երբ իր մտահղացումներն ամբողջովին իրականություն դարձնի, իր ասելիքն աշխարհին հասցնի: Իսկ առհասարակ մահվան հետ հաշտվել չի կարելի:

Հարցազրույցը՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

### Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝  
ՍՄՏՎԵԼ ԱՆԵՍՏՆՅԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՅՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԱՐԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝  
Հեռախոս՝  
Էլ. փոստ՝  
Ինտերնետ՝

Կապան, Շահումյան 20/32:  
(0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 06 28 02:  
syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՐՎԱԶԳ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է: © նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ ՕՒՄ 000231: Թղթող տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Օավալը՝ 2 տպագրական մասով: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 18.09.2014թ.: